ՀՈՒՇԱԳԻՐ
ԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « օր ամիս տարի » թ.

Սույն գիտական փոխկապակցվածության մասին հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «ԱԱԳԼ», ի դեմս տնօրեն Գևորգ Քառյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնանդրության հիման վրա, մի կողմից,

և

« Անուն Ազգանուն » ը, որը սույն հուշագրի հետագա շարա-դրանքում՝ ան¬վանվում է «ԱԱԳԼ-ի հետ փոխկապակցված գիտնական (AANL affiliated scientist)» մյուս կողմից, իսկ միասին՝ «Կողմեր»

Հիմնվելով փոխադարձ հարգանքի, թափանցիկության և բարեխղճության սկզբունքների վրա՝ կողմերը համաձայնվեցին հետևյալի մասին.

1. Հուշագրի նպատակը

1.1. Սույն Հուշագրի նպատակն է հիմնել Կողմերի միջև երկարաժամկետ համագործակցություն, սահմանել այդ փոխադարձ համագործակցության կարգն, ինչպես նաև ապահովել Կողմերի միջև արդյունավետ հաղորդակցության պայմանները:

2. Համագործակցության ուղղությունները

2.1. Սույն Հուշագիրը ստորագրելով ԱԱԳԼ-ն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի ԱԱԳԼ-ի հետ փոխկապակցված գիտնականն իր գիտահետա-զոտական արդյունքները համապատասխան հրապարակումներում և/կամ տպագրվող հոդ-վածներում ներկայացնելիս օգտագործի Հիմ-նադրամի անունը, իսկ ԱԱԳԼ-ի հետ փոխ-կապակցված գիտնականը պարտավորվում է իր գիտահետազոտական արդյունքները համապա-տասխան հրապարակումներում և/կամ տպագր-վող հոդվածներում ներկայացնելիս հիշատակել իր և ԱԱԳԼ-ի համագործակցության մասին՝ մատնանշելով ԱԱԳԼ-ի անվանումը, որպես իր գիտական գործունեության վայր (affiliation):

2.2. Կողմերը, կնքելով սույն Հուշագիրը, պահ-պանում են իրենց առանձին և հատուկ նպա-տակները ու պարտավորությունները: Սույն Հու-շագիրը որևէ կերպ չպետք է մեկնաբանվի որպես Կողմերի միջև նախկինում կնքված կամ ապագայում կնքվող որևէ համաձայնագրերի կամ պայմանագրերի լրացում կամ գերակայի դրանց նկատմամբ:

3. Համագործակցության և աջակցության այլ ձևերը

3.1. Սույն Հուշագրով սահմանված համագործակ-ցության շրջանակներում Կողմերի մասնակցու-թյամբ կարող են պարբերաբար կազմակերպվել աշխատանքային քննարկումներ, այդ թվում՝ ԱԱԳԼ-ի հետ փոխկապակցված գիտնականի գիտահետազոտական ծրագրերի և/կամ այդ ծրագրերի իրականացման արդյունքում ձեռք բերված տվյալների ներկայացման միջոցով,

3.2. Սույնով կողմերը համաձայնվում են, որ սույն Հուշագրի կատարումը ապահովելու նպատա-կով կարող են ընտրել նաև համագործակ-ցության այլ ձևեր (սեմինարներ, կոնֆերանս-ներ, դասախոսություններ և այլն), որոնք սահ-մանված չեն սույն Հուշագրում, սակայն համա-պատասխանում են և բխում են սույն Հուշագրի նպատակներից,
3.3. Սույնով կողմերը համաձայնվում են, որ ԱԱԳԼ-ի հետ փոխկապակցված գիտնականը կարող է համագործակցել նաև այլ միջազգային կազմա-կերպությունների և համապատասխան շահա-ռուների հետ՝ այդ մասին տեղեկացնելով Հիմնադրամին:
3.4. Սույն Հուշագրով նախատեսված համագործակ-ցության շրջանակում, ԱԱԳԼ-ն իր հետ փոխ-կապակցված գիտնականին կարող է տրամա-դրել՝ ԱԱԳԼ-ի համապատասխան նյութատեխ-նիկական միջոցներից օգտվելու, ԱԱԳԼ-ի տա-րածք անարգել մուտք և ելք գործելու, ինչպես նաև թեմատիկ սեմինարներին և կոնֆերանս-ներին մասնակցելու, դրանք վարելու, իր գիտա-հետազոտական աշխատանքները ներկայաց-նելու հնարավորություն:

4. Տարաձայնությունների կարգավորումը

4.1. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանումից կամ կիրառումից ծագող բոլոր տարաձայնու-թյունները Կողմերի միջև կարգավորվում են բարեկամաբար, բանակցությունների և խորհր-դակցությունների միջոցով:

5. Փոփոխությունները և լրացումները

5.1. Սույն Հուշագրում փոփոխությունները և լրա-ցումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրությունն-ով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

6. Ուժի մեջ մտնելը և դադարեցումը

6.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Այս Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից՝ այդ մասին գրավոր ծանուցելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Սույն հուշագիրը կարող է լուծվել նաև կողմերից որևէ մեկի կողմից իր պարտականու-թյունները պատշաճ չկատարելու դեպքում:

6.2. Հուշագիրը դադարեցնելու դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտվեն:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն Հուշագիրը կազմված է հավասարազոր իրա¬վա¬բանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրա-քանչ¬յուր Կողմին տրվում է մեկական օրինակ՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԱԱԳԼ

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային

գիտական լաբորատորիա

(Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամ

ՀՎՀՀ 01202364

ՀՀ, Երևան,Ալիխանյան եղբայրների փող.,2 շ.

Տնօրեն՝ Գ. Քառյան

Կ.Տ.

ԳԻՏՆԱԿԱՆ

Անձնագիր « **** »

ՀԾՀ՝ « **** »

Բանկ: « **** »

Հասցե « **** »

« Անուն Ազգանուն »

Կ.Տ.